ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

11 հոկտեմբերի 2016 թվականի N 131-Ա

Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 226-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 15594-16 զեկուցագիրը, ինչպես նաև *Ս. Ալեքսանյանի գրավոր բացատրությունը՝* **կարգադրում եմ.**

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Սուսաննա Վաչեյի Ալեքսանյանի*** նկատմամբ կիրառել <<***խիստ նկատողություն***>> կարգապահական տույժը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 11
ք. Հրազդան